

891.99

U-99



ՄՏԻԵՐՆԵՐ

ԳԱԳԻԿ
ՍՏՐԻԿԵԱՆ

ԹԻՓԼԻՋ
Երև. օր. Ն. Ազատեան
1913

891.99
Զ-99

Կ-99

01 JAN 2009

18 NOV 2011

1105



ՍՏԻՆԵՐ

232

ԹԻՖԼԻՑ
ԷԼԷԿ. ՕՐ. Ն. ՄԱԳԱՆՈՍ
1913

25 .02. 2013

22594

—Ես ապրում եմ իմ սեպհական լուսի
մեջ ու նորից կլանում այն բոցը, որն
ինձնից է բղխում...

Ֆ. Նիցեի

ԵՐԱՆԳԱՒՈՐՈՒՄ

ՄԵՆԱԿՈՒԹԻՒՆ

Պարզ գիշերին ես սիրում եմ
Աւսարակը բարձրանալ,
Երբ բոլորը փուն են մտնում,
Մենակ մնալ, հիանալ...

Երկրի վրայ, աստղապարուր
Երկնքին քիւր ասերներ
Ինձ բերում են գաղսնիք ժպուր
Ու վճահիւս հէփաքներ...

—Ես սիրում եմ ամպեր... ամպեր, որ
սահում են այնտեղ... մոզական ամպեր...

Ե. Բողիկ:

ԵՐԵԿՈՅ

Քուն են բերում մեզ դառները օրորով...
Այնպես հեռուն ես խաղաղ է, ես փայլուն...

Վայրի բազերն երամներով, աղմկով
Ամպերի հետ դեպ' արեւմուտ են թռչում...

Իմ գլուխն է քո կուսական գեղ կրծքին.
Նազուն ձեռով գունաս դէմքս ես դու շոյում...
Ամպերի հետ հիստած իմ սիրտն ու հոգին
Ինձ իրենց հետ դեպ' արեւմուտ են փառում...

Վարդերն այսօր խորամանկ են պնդել...
Սոխակները խելառ են ու կախարդւած...
Ծաղիկներն են սիրով իրար մեղմ գգել.
Կարծես՝ առօր լեզուն էլ է կաշկանդւած...

Ես սիրում եմ երեկոներն ամառւան,
Երբ հիպնոզած աշխարհն է խոր փուն մտնում,
Երբ հոգիներն—ալ-ամպերի փառւան
Լի երազով դեպ' վերջալոյսն են թռչում...

Sérénité

Փայլում է մեռակ
Ձեան վրա սպիտակ
Շողը արեւի,
Ձմռան արեւի
Անվրդով գունաս...

Ցուրտ երազների,
Ովկիանոսների
Առագաստի պէս,
Կախարդ ծփանքին
Օրորում եմ ես...

ԱՆԲՈՒՆ ԳԻՇԵՐ

Կէս-գիշերին քնից տեսիլքն ինձ հանեց...
 Լուսինն էր այդ դողում ծովում, որ վառւեց.
 Ու փայլեցի ես անապատ ափերով
 Անճուն-անտուն... ծովն էր ծփում ցոլփերով...

Այդ մեծ ժամին, երբ լուսինն էր աղօթում
 Ու երբ ծովն էր լի դիւքանքով ինձ շնչում,
 Ես յիշեցի մի աղջկայ ոսկեհեր,
 Ու ինձ ժպտում էին փայլում վառ աստղեր...

Ու իստուր էր... փայլերս էին դանդաղկոս...
 Լի երազով ալիքն էր ափ գլորում.
 Ու ննջում էր սեղմում կուրծքս խոր կառօս...
 Աստղերը վառ ժպտում էին՝ ինձ կանչում...

ԱՇՆԱՆ ԵՐԳ

Տերեւները չոր-դեղին
 Փռած են գետնին...
 Գունաս վարդն է թառամում
 Մոռացած սրտում...

Անվերջ դողդոջ ասեւերն՝
 Մերկացած ծառեր...
 Ու կոսրաստող չոր նդներ...
 Սառ-ցուրտ կաթիլներ...

Ու ես մենակ, մեն-մենակ
 Լուռ չարագուռակ
 Գաղտնիքի հետ, խոր լնի
 Նայում եմ դողին...

Կ-իՆ

Աւան օրերին մենակ էի ես...
 Յանկարծ դու եկար՝ ուրախ երջանիկ,
 Փախը դէմքիդ, անհոգ մանկան պէս...
 Դաւսերի աղջիկ, դաւսերի ծաղիկ...

Դու իմ գեղեցիկ, ծիծաղիր անվերջ!
 Թող, իմ քանկագին, համբուրեմ ես քեզ!
 Ու ծծեմ քնքուշ ոսկեայ մազերիդ
 Բուրմունքը անուշ, սէրը աչերիդ...

ԳԱՐՈՒՆ

Այստեղ գարունն այնպէս խաւար է անգոյն,
 Այնպէս սասիկ կարօտել եմ հարաւին...
 Գիտեմ—այնտեղ գեղ գարունը բիւրագոյն
 Մասաղ սիրոյ երգն է շնչում հովերին...

Այնտեղ—հեռում կանաչել են սարերը,
 Ու արձուսիկն է երջանիկ դայլայլում,
 Ու այրում է սափ սիրավառ արեւը
 Քնքուշ ձեռք, որ ծաղիկ է հաւաքում...

* * *

Կանաչ ափին իրիկնադէմ ես այսօր
Տեսայ քեզ մերկ՝ կարմիր լուսով շողարկւած...
Խիս թփերում, շունչս պահած ես այսօր,
Նայում էի կրծքիդ մասադ վրդովւած...

Դու գնացիր... Անհառք խոր փուն մտաւ.
Ու սոխակն էր միայն ինձ պէս բորբոքւած...
Քուլա-փուլա սեւ թախծալի մէզն իջաւ.—
Ու դու կորար, հեռուում կորար խաւարած...

Վերադարձայ տուն դառնալով ամայի...
Անգոն հոգով... Յուրս էր շունչը դառնալով...
Ու անխնայ պոկում էի երազոս
Ծաղիկները... Ուռենին էր լուռ, վշտոս...



ԵՐԵԿՈՆԵՐ

Երեկոներ! Երեկոներ!
Յնորալի սուերներ!
Ոսկեղաւր մարգարսացող,
Երեկոներն աղօթող
Գնացին!
Գնացին!

ՍՏԻԵՐՆԵՐ

Ինձ ծանօթ են ոգիներ
 Դու չ'գիտես, դու չը գիտես.
 Ու բիրագոյն սուերներ...
 Դու չ'ես տեսել, դու չ'գիտես...

Ու այնպէս լուռ, սիրուն է
 Վառ գիւերը... Ինձ բերում է
 Երկնից ու սարերից,
 Մարգարտաւաղ աղբիւրներից.

Նրանց խմբով բիրաբիւ...
 Այնպէս սիրուն են վազվզում,
 Ու այնքան շատ են՝ անթիւ
 Լուսնի տակին, իմ սենեակում...

Անբռնելի-գաղտնալի,
 Դողդոջ-փնփուռ, զարմանալի!
 Ա՛խ, խենթ-խելառ, սիրուն են...
 Զէ, չ'գիտեն... նրանց չ'գիտեն...

ԱՆՏԱՌՈՒՄ

Այն գիւեր
 Ոսկեհեր
 Մենակ էի անտառում
 Սուերների հետ անուն...

Արձագանք!
 Արձագանք!
 Թփերն էի շփում,
 Արծաթ ցողով փայլփլում...

Միայնակ
 Լուսնի տակ,
 Յնորհներով կաշկանդած,
 Գաղտնիքներով զրաւած...

Ոսկեթել
 Երազներ.
 Երազ էր իմ հոգին էլ!
 Գաղտնիք էր իմ սուերն էլ!

* * *

Եկան գնացին,
Կ'գան ու կանցնին...
Ո՛վ է մնալու,
Ո՛վ է դառնալու...

Հեռու անցեալի
Սուերն ենք կեանքի...
Եկան գնացին,
Կ'գան ու կ'անցնին...

ՍՖԻՆԲՍ

Շուրք է գցել վերջալոյսի
Պուրպուր ծովում
Վանքն հեռում... Ցոլ ջրերի
Մէջ են դողում
Սեւ պատերը փոշապատ
Մամռապատ...

Ու շնչում է հին անցեալով
Խոր սուերը
Օրորող... Բիւր կրակով
Վերջալոյսը
Քողն է օծում մառախուղող
Մշուշող...

Խոր գիշերայ ծոցում անհաշի
Լուռ հալչում է
Հայեացք... Հոգիս է սաք.—
Փափուկ շունչն է,
Որ դիւրում է կախարդաբար,
Միայն...

Հին օրերի գաղտնիքն անձայն
Բերում է ինձ
Սփոփանք.— կայ օրեւան
Երազներիս.
Թէպէտ համր, զուրաս սուեր
Անհարբեր...

ՍՈՆԷՏ

Դու իմ ընկեր, ի՞նչ ես նայում մեռելած,
 Խոր հայեացքով. գլուխդ կախ, լուռ երկար...
 Թող մսֆերդ, պարզիր դէմքը քո խաւար...
 Դու իմ ընկեր, իմ խեղճ ընկեր կախարդւած...

Ու քո հոգին լցւած է չար գաղտնիքով,
 Ու դողում եմ քրքունքներդ ցուրտ դողով,
 Ու բեռի տակ—մսֆերի տակ կարկամած,
 Նայում ես դու յամառ կէտին կաշկանդւած...

Տես, դաւեսերը պէժ-բիւրեղով ցոլացին,
 Ու վաղօրեայ արեգակն է մեզ շոյում...
 Մի՞թէ լուռ է ու չի ցնցում քո հոգին,
 Ագահ ծծում արշալոյսը, ծիծաղում?

Երբ մահաւունջ երեկոյեան մութն իջնի
 Ու երբ խաղան սուերները գաղտնալի,
 Դու, միայնակ թափառիր խուլ սարերում,
 Լի մսֆերով... չար գաղտնիքը քո հոգում...

ՎԵՐՋԱՆՈՅՍ

Յակինթ ամպերի,
 Նուրբ մառախուղում,
 Որ վերջալոյսի
 Ոգոցն է սրտում
 Հալչում են քնուռ,
 Կախարդ սուերներ
 Ու քաղցր անուրջ
 Սիրաւունջ հովեր...
 Ու արմազաւող
 Ոսկեպէժ փոշում
 Վառում հրդեհով
 Թմրած երկնքում...

ԵՐԵԿՈՅ

Երեկոն է մեղմ դողում,

Յող թափում...

Երազներս են ցուրս—հաս-հաս

Ադամանդ...

Եաղուք շողերն են մարում

Խաւարում...

Իմ ոտերն են ցողապաս,

Անհասաս...

Էլ չկայ!

Նա չկայ!

Լալաներն են ուռացած

Խուլ փակւած...

Երեկոն է ցող թափում՝

Արժասում...

ԼՈՒՍԱԴԻՄԻՆ

Ախ, ինչու աստղը, լուսաստղը վառւեց

Ու զովը դիպաւ թմրած երեսիս?

Ինչո՞ւ լուսաստղն ինձ սթափեցրեց

Ու խաղաց յոգնած արբած նակասիս?

Ափսոս, որ աստղը, լուսաստղը վառւեց,

Ու զովը դիպաւ—ինձ ֆնից հանեց...

Ու մառախլապաս դաւժը ցողաւոյ

Այնպէս մաքուր է ու անուշ բուրում...

Ու ես նայում եմ անւարժ, գլխակոր,

Ու ափսոսանքից սիրս է նմլում...

Ինչո՞ւ ինձ ֆնից լուսաստղը հանեց...

Ախ, ինչո՞ւ զովը հոգիս փրկեց...?

*
* *

Գիտեմ հեռու ես աշխարհ...

Եկ գնանք, եկ գնանք...

Ոչ ոք մեզ չես չի բերի,

Ոչ ոք մեզ չի գտնի...

Ի՞նչ ես նայում... Այդ միայն

Սողում է չոր կրիան...

Ի՞նչն է պահում քեզ այստեղ...

Եկ ինձ մոտ, եկ այնտեղ...

Այնտեղ չկայ ոչ սկիզբ,

Ոչ էլ վերջ... Անսկիզբ

Եմ անվերջ ես այնտեղ

Լուսի մեջ... Լուռ ժամեր...

ՆՐԱՆ

Թող, որ մոռանամ քո նորաբողբոջ
Գրկումը քննու ես աշխարհն ամբողջ...
Ինձ ձանձրացրեց երազն անպսուղ,
Ես վախենում եմ ժամերից սխուր:

Երբ արեւմտիս հողմն է մեղմ խաղում
Գարնան ոսկեգոծ քո զանգուրներում,
Ինձ երկինքն է ժպտում քափանցիկ,
Ու փաղր շոյում զովը բիրեղիկ...

Դիշերը զգոյս խլում է կամաց
Անհունութեան մեջ ծոցի խաւարած
Մեզ, ու կարծես թէ էլ չենք դառնալու,
Երբէք իրարից չենք բաժանելու...

Ինձ սիրահրոյի ձայնը է գուրգուրում,
Անուշ քորովում անունս մթնում...
Ու փայփայանք քեթեւ է այնպէս,
Անցած մանկութեան, երջանկութեան պէս:

ՍՈՂԵՏ

Ես կը երգեմ քո երգը սիրած...

(Նա դեռ չէ մոռացւած)...

Կրկին նստիւ կողքիս հերարձակ

(Օ քաղցր երազանք)...

Մեզ լուսինը խանդոտ չի տեսնի՝

(Թփերն են խիս ծառի)...

Ու կը դառնան ժամերը նորից

(Մենք հեռու՛ր բոլորից)...

Դիր իմ ուսին գլուխդ ոսկեհեր

(Մեկաբոյր ծով մազեր)...

Ու թող վառւի նորից սէրն անցած՝

(Նա դեռ չէ մոռացւած)...

ԹԱԽԻՇ

Անծայր, ձիւնապատ դաշտի վրայով

Սեւ ագռաւները անկանոն խմբով

Անցան կողոռոցով...

Ու լուռ սենեակում, աղօտ սենեակում

Առանց պատճառի ես լալ եմ ուզում,

Մենակ սենեակում...

Անվերջ, կցկցուր մութ հորիզոններ,

Ուր ագռաւների կորան սեւ խմբեր

Ցուրտ գերեզմաններ...

Ու պատուհանից ջուրն է կարկաբուն,

Յամառ արցունքից հայեացքս է մթնում...

Խաւարն է իջնում...

ԹԱՆՄԱՆ ԵՐԳ

Կարմիր արերը մեռնում է հեռուում,
Հովերը նրան ողբում են մեղմիկ
Կարապն է դողում մենակ ջրերում,

Կարապն է սրտում:—

Մեռաւ մի աղջիկ!...

Յուրս, գաղսնագողի խաւարն է իջնում
Լի սւերներով չար, սել, խորամանկ
Զանգն է դողանջում ու ծանր չոփում

Մութ-լուռ դաւեւում...:

Սել խոր դագաղում--սառ-գունաս դիակ...:

Կարմիր արերը մեռաւ շատ հեռուում...
Գերեզմանումն է ոսկեհեր աղջիկն...
Նրանց են ողբում հովերը մեղմիկ,

Նրանց են սգում...:

Կարապն է սրտում!..

* * *

Շոյում ես դու նոր հաւաքած
Փափուկ կարմիր վարդերը...
Քնքուռ ձեռով վարդից պոկւած՝
Դեփն ընկաւ սերերը...

Ծիծաղում ես դու կենսուրախ,
Բայց նայում եմ ես գեփն...
Զոր սերերն է գեփնին, աւաղ!
Մի ծիծաղի, իմ անգին!

Մութ-մեռւում դէմքդ է հալչում
Դունաս սսերդ է նայում...
Օդն է լցում սառսուռ շնչով,
Հրհասում չար հայեացքով...

ՀՐԱԺԵՇՏ

Գունաս տեսիլք էր, որ եկաւ անցաւ
Ու նրան տարաւ...

Արդեօք տեսել եմ աչերը մարտոյ,
Աչերն ինձ օրհնող...

— Ամեն մի գարուն ծիծաղ չի բերի,
Հէփաթ չի պատմի...

Գարունն արցունքով իմ ուղին լաց
Ու աներգ գնաց...

ԱՉԵՐ

Ժպտուն երազուն,
Քննուց գուրգուրուն,
Ո՞ւր էի դուք փառում,
Անուրջում ծփուն,
Աչեր երազուն...

Դուք անձայն օրօր
Երգում ամեն օր,
Ինչպէս հեռաւոր
Ալիքը ոյր,
Պսպղուն մոյր...

Ժպտուն երազուն,
Աչեր դուք անքուն,
Ո՞ւր էի ինձ կանչում
Աչեր գուրգուրուն,
Թախծոս ու սիրուն...

ԳԱՐՆԱՆ ԵՐԵԿՈՅ

Երեկոն անթիւ յուլունքներ ցանեց—
—Գոյնզգոյն կրակ ջրերին փռեց...

Կանգնած կամուրջին՝
Նայում եմ գետին,
Աւետեաց ժամին՝
Կանգնած կամուրջին...

Գարնան շղարեն է ծուխի պէս իջնում—
Փակ կոկոններն են գետափին բացւում...

Հովն է համբուրում
Ձրերը փայլուն...
Գետն է օրօրում
Ինձ անուշ շնչում...

Ձե՛մ կարող անցնել կամուրջը մենակ—
Ձ'կայ աղջիկը վառ ոսկէգիսակ,

Այլւած այտերով,
Որ մասդաւ շնչով
Բացեց անխռով
Սիրս կոկոմող...

Փակ կոկոններն են գետափին բացւում...
Գարուն է գարուն... Ինչո՞ւ եմ սրտում...

ԱՆՅՈՒՆՈՒԹԻՒՆ

Առաջին երգն իմ իստուր
Ձ'գիտեմ քուռ ուր...
Եթէ հասաւ մոռացւաւ,
Ու նա էլ յետ չեկաւ...

Հեռու անծայր, հորիզոն!
Սիրսս տուր, հորիզոն!
Երգս կորաւ քո ծոցում,
Իմ երգը փափկասուն...

Առաջին երգն իմ կորաւ
Ու նրան չը հասաւ...
Երկրորդ, երրորդն էլ քուան
Նոյնպէս տեղ չ'հասան...

ՅՈՒՍԻԿՆԵՐ

Գիտեմ, որ ոչ ոք էլ ինձ չի յիշում...
 Ես չ'եմ էլ ուզում, որ ինձ յիշին.
 Միայն յուեքը, յուեքն են սանջում,
 Եթէ նրանք էլ ինձ մոռանային...

Այստեղ ամեն բան, ամեն առարկայ
 Ունի մի շեղ երկար պատմութիւն.—
 Ծաղիկը չորցած սեղանի վրայ,
 Ձեռնոցն սպիտակ խուլ պահարանում...

Բոլորն ինձ թողին... միայն հետքերը,
 Միայն թանկագին հետքերը մնացին...
 Արդեօք յիշում է ինձ գոնէ մէկը,
 Անունն՝ անունս կարօտ-երթունքին...

Ին

Երազի պէս եմ
 ձեմելին յիշում,
 Որ կարծեմ
 Մենք անցանք թեւանցով,
 Վառ անուն
 Իսկ յիշում էք դուք...

Վաղուց մոռացաք
 Դուք ցնորքն յիմար,
 Այնպէս չէ...
 Ու կրկին դուք անցաք
 Սիրահար
 Ուրիշ հետ... չէ...

ՍԷՐ

Քեզ գիշերն է հիւսում
Շողերից փայլուն
Վարդագոյն...

Ու հաչում ես լուսին,
Վաղ լուսաբացին
Իմ կրծքին...

Դու լուսեղէն չ'կաս,
Հրեղէն անհաս,
Դու չ'կաս!

Ու քափառուն միայն
Ստերներդ անձայն
Ինձ զսան...

Ես յոգնեցի... նորից
Վարան մտուից
Երագիս

Դու դուրս փախար... Միայն
Ստերներդ անձայն
Ինձ զսան...

* * *

Սոխակըն եկաւ ու արագ զնաց...

Անտառ մնաց
Տխուր ու անձայն, լցած վարդերով.
Անգոն վարդերով...

Խմբերով անցուկ
Գալիս գնում էք դուք
Հովոցով փափուկ...
Ձէ, նա մի աղջիկ էր
Կախարդ—ոսկեհեր,
Նա ձեզ հետ չի եկել...

Սոխակը եկաւ ու վարդ չ'զսաւ...
Արագ հեռացաւ...

ԳԱՐՆԱՆ ԵՐԳ

Հէլիոսի նաւ,

Վարդաբոյր գարնան անուշ քորովանի!
Քեզ եմ ուղարկում համբոյր սիրատուն,
Աղջիկ փափկասուն!

Սիրակէզ վարդի

Համբոյր դու ալ շուրք, ժպիտ հովեր!
Քեզ եմ նւիրում երգս սիրանիւս,
Աղջիկ ոսկեհուս!

Յուրս էր ձմեռը...

Քեզ էր սպասում գունաս երգիչը,
Քեզ է աղօթում սէրը վճահար,
Աղջիկ սիրավառ!...

ՊՕԷՏԻ ԱՐՅՈՒՆԲԸ

Հեռից եկաւ նա այրած
Բեգարած...

Իմ ջրերում փուն մսաւ
Ու մեռաւ...

Ես նրանից ստացա՝
Գողացա

Մի հաս փայլուն արտասունք,
Վառ արցունք...

Իմ ոսկեթել շարանում՝
Մազերում

Նա փայլում է բոլորից
(Ակներից)

Վառ վարդագոյն լուսծէգին
Արեւին...

Այնքան ակնունք ունեմ ես
Սիրակէզ,

Որ բոլորից գողացայ,
Սէր առայ...

Բայց միայն մէկն է վառում,
Կայծկծում...

Ինձ ինչ... Պարկը նրան
Յէ՛ս կ'սայ...
Զբերն արդէն վառւեցին,
Կանչեցին...

Ալիքներն են գլորում,
Ափ սանում
Նրան—բերանը կապուած
Կիսաբաց...

ՊՅԵՏ

Դու նման ես ալիքին,
Որ դիպաւ սեւ ժայռին...
Ժայռը մնաց արցնքոր
Ալիքին հեռաւոր...

Ու լուսինն է մեղմ շոյում
Սեւ գլուխը գուրգուրում...
Նա մաււում է լուռ հպարտ
Զբերում հարազատ...

--- Բիւր կրակով շողողաց,
Արեւը շողողաց
Աւազներին մարգարիս—
—Սեւ ժայռից գրանիս...

Ու խաղում է սիրախաղ
Ալիքը խենթ-ուրախ...
Անցած վճռով փրփում,
Ամաչկոտ յէ՛ս փախչում...

ԿԻՆ-ԳԻՆԻ

Ես գիտեմ անուշ թոյն՝ կին-գինի...
 Ու խմում եմ, երբ ուզում եմ, որ փախչի
 Ինձանից սեւ մահը... սեւ մահը...

Նրա մօտ կորչում է իմ ցարը,
 Ու խեղդում կարմիր գինում իմ նիչը...
 Կին-գինի! գինի-կին! սէր!.. համբոյր!..

Խեղդում է ոսկեհուր ինձ գանգուր.—
 Ու կորչում են սարածութիւն ժամանակ.—
 Սաք գինի! մերկ ուտե՛ր սպիտակ!...

ՎԼԵՈՂԱՏՐԱ

Ես մեղքդ եմ սիրում,
 Մարմինդ գերող...

Հեշաբոյր շնչումդ,
 Գրկումդ անամօր
 Վերջին արցունքն էլ մաքրութեամբ փայտդ
 Թող գոյութեան արքունիդ տրփոս...

Արեւելի շունչ!
 Վառ եգիպտահիս!

Որ գիշերին ուշ
 Հրամայողաբար
 Գուռը ծեծեցիր, անխուս սիրունիս
 Ու պատահեցիր մահին կրկան!

Հնոց աչքումդ
 Է հոգիս հալչում...

Ու նկուն գրկումդ
 Եմ քաղցր դողում...
 Մեղքդ եմ սիրում, մեղքդ արհամարհող
 Աստած ու ամօր... Մարմինդ բուրդ...

1100000000

the object of the
the object of the

the object of the
the object of the

the object of the
the object of the
the object of the
the object of the

the object of the
the object of the
the object of the
the object of the
the object of the
the object of the
the object of the
the object of the

the object of the
the object of the
the object of the
the object of the
the object of the
the object of the
the object of the
the object of the

“ 1 2 3 4 5 6 7 8 ”

ՍԵՒ ՕՐ

Ձոր խոտերն են գերեզմանին ֆո դողում...
Հեռու մենակ, մենակ ենք մենք միասին...
Մեռելոցի սառույց հովն է մրմնջում.—
«Երկինքն է չար, անէծք քափիր երկնքին»...

Շիրիմիդ մօտ ինձ խեղդում ափսոսանք.—
Թռան օրեր, մանուկ օրեր երջանիկ...
Դողում եմ ես երազներիցս յափսեան...
Էլ չ'ես գրկում ջերմ կառօտվ ինձ, մայրիկ!..

Ձոր խոտերն են գերեզմանիդ ֆեզ ողբում...
Հեռու-մենակ, մենակ ենք մենք միասին...
Առնան փամում գունաս դէմքդ եմ ես տեսնում.
Երկինքն է չար, անէծք քափիր երկնքին...

ՎԵՍ ՕՐԻՆ

Լուռ կէս-օրն է երազում,
Քաղցրաբոյր խոր թմբում...
Բամբինն է մեղմ խուլ հնչում
Պարսիզում, սսւերում...

Մի քրքիր անցեալը,
Մի կրկնիւր հին երգը. —
Հեռու է քարմ շիրիմը...
Մի քրքիր անցեալը...

Այն նա գնաց վճառէմ,
Էլ չի գայ՝ ես գիտեմ...
Գունաս պատկերն է իմ դէմ...
Թող լռեն, թող լռեն!

ԱՆՑԵԱԼԸ

Մի շատ հին երգ եմ ես յիշում,
Մի անուշ ձայն գուրգուրում...
Ու մի գունաս պատկեր վճռոս,
Մշայօն աչեր արցունքոս...

Օրօրօցիս երգն եմ երգում
Տխուր ժամին ես մենակ,
Ու արսաւում, դառն արսաւում՝
Մայրիկ, մայրիկ!.. հողի սակ...

Վերջին պարանն էլ կտուց...
Ծովը խփեց ավերին...
Նաւահանգիստ չկայ՝ քանդուց...
Խաղում է նաւն ալիքին...

„2 U t n“

ՁՄԵՌ

Թռչում ենք մենք բուր-բուրանին դառնելով...
Գայլերն են մեզ ուղեկցում խուլ ոռնոցով...
Ցուրս է, ցուրս է... Քամին, ձիւնն են մեզ ծեծում...
Դողում ենք մենք իրար կաշում փաթաթում...
Ճոռոռում է հսկիւ թռչում սալն արագ...
Երկինքն է մութ՝ չ'կայ ոչ աստղ, ոչ նրագ...
Հեռաժառանգ դառնում գտնի մենք իրար...
Էլ չ'ենք դողում... Մեզ ի՞նչ, ցուրս է, քէ խաւար...

ՁՄՈՒՆ ԵՐԵԿՈՅ

Դու մի գնա... Քամին է ծեծում
 Չարագուշակ
 Լուսամուտը, խուլ ոռնում...
 Մի թող մենակ!

Այսպէս գրկած ոսկերդ քնուե
 Դորին հանգչեմ...
 Պատմիր հէփաք դու անուշ,
 Ու ես լսեմ...

Դուրսը ամեռ... Յրսից քնում են
 Մեռելները...
 Խաւար դառնում խաղում են
 Ձեան քմբերը...

Մի գնա... Լսիր՝ խուլ չարագուշակ
 Լուսամուտն է
 Ծեծում դառն հառաչանք...
 Դուրսը ողբ է...

ՀԵՏԲԵՐ

Լոյսը բացւեց նորից անգոյն
 Իր ցաւերով, իր շնչով...
 Նայում եմ ես ոյր նամբուն,
 Ծածկւած մաքուր հարթ ձնով...

Վայրի թափով սայլակն անցաւ,
 Դարի յետն նա կորաւ...
 Ճամբան մնաց խոր հետքերով,
 Երկար անծայր հետքերով...

Ու մտքերս քո անունը
 Առաւ թռաւ, քրքեց...
 Յուրս նամբին են խոր հետքերը,
 Ու ձիւն չ'եկաւ, չ'ծածկեց...

ՁՄՈԱՆ ԾԱՂԻԿՆԵՐ

Ձմռան ծաղիկներ,
Որպէս խեղճ որբեր,
Սենեակումս փակ
Թոշնում էի գունաս...

Ձեր արթունքները,
Թերթերունքները
Յրսից կապուսած,
Արցունքով պասած:

Ճմրում են հոգիս...
Ա՛խ, եթէ նորից
Թարմութեամբ գարնան
Ինձ նրանք ժպտան...

ՎԻՇՏ

Շաս ժամանակ ինձ քում է,
Թէ սիրում եմ
Ձմեռը, որ ողբում է,
Երբ դողում են
ձղները չոր, խուլ կոսրասում,
Հառաչում...

Շաս ժամանակ ինձ շաս քանգ է
Թափուն վիշտս
Իմ կրծքում, որ լալիս է
Անգուստ ցաւըս...
Ու չեմ ուզում, որ մէկը գար,
Ողջուն տար...

Մի լար այդպէս՝ քեզ չեմ բողնի,
Իմ վիշտ-մանկիկ,
Ես մենակ... Ամուր կողայի
Գունաս որբիկ
Սեւ դուռն հոգուս... Ոչ ոք չի գայ՝
Դու մի լա...

ԻՐԻԿՆԱՄՈՒՑ

Մանր —

— Մանր

Ձիւն է գալիս...

Սիրսս է լալիս,

Սիրսս է լալիս...

Անծայր

Խաւար

Դաւաճում անսուն

Հողմն է ողբում

Ու հեծկլում...

Անլոյս

Անլոյս

Հորիզոն մութ!

Իրիկնամուս!

Իրիկնամուս!

ԿԵԱՆԲ

Քո մագերի հանգոյցներն են խնւած...

Սենեակն է ցուրս...

Մերկ մարմինդ է գունասւած...

Գրկումդ է ցուրս...

Հին փռուլ է անկողինը ծածկել,

Ու քարահոտ

Քրտնոքն է նա քոքնել

Կեղտոտ, կեղտոտ!

Երակներդ ցամաք կապոյս ու սգեղ...

Սառոյցից սառ

Թաւարում ես դու այստեղ

Երկար, երկար!..

Քո կոծոսած քրտնոքներն են քարախոտ

Շնչում գունաս

Ու ինձ բերում մահու սօր...

Դու, չար հիւանդ!

Ու դողում ենք մենք իրար մօտ երկուսով...

Իրար գրկում

Մենք ուժասպառ, անէծքով...

Իրար սեղմում...

1874

“1 2 3 4 5 6 7 8 9”

* * *

Գիշերն եկաւ գութաբեր՝
Սսւերներ... Սսւերներ...

Չկայ սկիզբ, ոչ էլ վերջ
Ծովի մէջ, ծովի մէջ...

Մի կանաչ աստղ թօթափուեց,
Կորաւ լոյս չ'սւեց,
Ու նա մեռաւ խաւարում—
—Իմ սիրտը իմ կրծքում...

Ո՞վ ինձ բերեց սեւ գոյժը.—
Խաւարը, խաւարը...
Չու! Ու երկրորդն է մեռաւ,
Երրորդն էլ վայր ընկաւ...

Չկայ սկիզբ, ոչ էլ վերջ
Ծովի մէջ, ծովի մէջ...
Գիշերն եկաւ բօթաբեր՝
Սեւ ամպեր... Սեւ ամպեր!..

ԵՐԱԶ

Ես տեսայ երազ, բայց լաւ չ'եմ յիշում...
 Գիտեմ, որ միայն շատ վատ էր, ահոս...
 Խաւարում էի, ծովում թափառում?...
 Անվերջ ուղիներ— սեւ մեղամաղանոս...

Միայն յիշում եմ պապդուն աչեր,
 Որ լցնում էին սիրս սարսափով,
 Ու գիծ վայրենի ծաղրանքի խօսքեր
 Ինձ էին հասնում խաւարի միջով...

Լսում էր քրիչ ծովի խորքերից,
 Հրոս երկնքից ու ամեն կողմից...
 Ես փախչում էի մութ անապատով.
 Մէկն էլ էր ինձ հետ վազում հեւալով...

Այդ երազը ես վաղուց մոռացայ.
 Էլ ես չեմ յիշում, թէ ինչ ես տեսայ...
 Միայն գիշերը, գիշերն է ահոս,
 Երբ կարծես՝ մէկն է անբաժան ինձ մօտ...

ՃԱՄԲՈՐԴ

- - - Զ'կա պատասխան...
 Այնպէս լուռ է
 Անապատն անձայն...

- - - Նա սպասում է...

Քամին է խաղում
 Աւազը պոկում,
 Սուր շուացնում
 Ու հեռւում լուռ...

- - - Նա թափառում է...

Ո՛վ մարդ, չես անցնի
 Անապատը չոր.
 Երբէք չ'ես պատի
 Գաղտնիքն հգոր...

Ո՛վ ճամբորդ գունաս,
 Փոխիր ուղիդ,
 Քայլերդ անհաստատ!...
 Զորս կողմդ առաջիկ

— Յոլուն աւազներ
 Կախարդ ոսկեփեր...
 Աստղազարդ գիշեր...
 Հէփաթ ոսկեհեր...

Ճամբորդ, թող ուղիդ!..

* * *

Խոր գիշերային
 Խաւարի միջին
 Երկիրն է սնում...

Այնպէս մութ է!
 Այնպէս լուռ է!

Ինչպէս գերեզման երկինքն է ծանր...
 Հառաչանք շատ խուլ... հառաչանք համր...
 Իմ ոտների տակ,
 Գետնի տակ
 Հին ոսկորներն են
 Հառաչում...

Այնպէս մութ է!
 Այնպէս լուռ է!

✓
Sérénade.

Երբ մեռւի մէջ անօտաւի ֆնով
 Ընկնում են հովերն—գովը գիշերայ,
 Հոգիս է լցում մեղմ տրոփիւնով
 Ու փափուկ շնչից դողում գիշերայ... V

Չուրում են մի տեղ տեղանք ու կարօտ
 Անուշ-բուքում... Ու ինձ շոյում են
 Ծովածուփի աչեր... կարծես՝ անծանօթ...
 Բայց մօտ—մերիմ, որոնց սիրում եմ...

Գիշերն է երգում անխօս ու անձայն,
 Մեղմ թեւահարած բիւր ոգիներով...
 Հոգիս է անյոյս սպասում նրան,
 Նրան անծանօթ—ի սօսաւիւնով...

* * *

Խոր գիշերային
 Խառարի միջին
 Երկիրն է սնում...

Այնպես մութ է!
 Այնպես լուռ է!

Ինչպես գերեզման երկիրն է ծանր...
 Հառաչանք շատ խուլ... հառաչանք համր...

Իմ ոսկերի սակ,
 Գեղնի սակ
 Հին ոսկորներն են
 Հառաչում...

Այնպես մութ է!
 Այնպես լուռ է!

✓
Sérénade.

Երբ մեռելի մէջ անօգուտի ֆնով
 Ընկնում են հովերն—գովը գիշերայ, V
 Հոգիս է լցում մեղմ սրովիւնով
 Ու փափուկ շնչից դողում գիշերայ...

Ձուլում են մի սեղ շենչանք ու կարօս
 Անուրջ-բուրբուռում... Ու ինձ շոյում են
 Ծովածուխի աչեր... կարծես՝ անծանօթ...
 Բայց մօտ—մտերիմ, որոնց սիրում եմ...

Գիշերն է երգում անխօս ու անձայն,
 Մեղմ թեւահարած բիր ոգիներով...
 Հոգիս է անյոյս սպասում նրան,
 Նրան անծանօթ—լի սօսաւիւնով...

ՅՈՒՇՈՅ ԾԱՂԻԿ

Ծաղկոց ափին,
Սառ լուսնեակին
Ջուրն էր դողում,
Շողոողում...

Ու դու գունաս,
Իմ հարազատ!
Սէրն աչերիդ,
Շրթունքիդ,

Խոր քնի մէջ—
—Երագի մէջ
Ինձ պոկեցիր,
Ու Տեցիր

Ուխտի ծաղիկ,
Կապոյտ ծաղիկ...
Ծաղկոց ափին,
Լուսնեակին...

Դու չհացար...
Ծաղիկդ սառ
Սէրս առաւ
Չորացաւ...

Սիրսս է միայն
Հին քանգարան
Պատկերազարդ,
Մէզապատ...

ԱԼԻՔ

Ալիքն եկաւ, դիպաւ գնաց...

Ո՞ւր գնաց...

Անհուն ծով... Գոռ խաւար անցակ

Անցակ...

Վախենում եմ ես լուռ մահից՝

Գաղսնիքից.—

Ի՞նչ կայ այնտեղ՝ գերեզմանում,

Խաւարում...

Դրախտ—դժոխք... չէ, չէ, սուտ է՝

Ո՞վ գիտէ...

Սեւ ալիքը ծովում կորաւ,

Յէտ չ'եկաւ...

ՀԱՆԳՈՅՑ

Քրքում եմ հանգոյցը սեւ...

Իգուր! Իգուր! Զուր սանջանի!

Անբռնելի քելեր անձեւ—

—Գիւերային հեկեկանի

Մենակութեան պէս ահաւունչ...

Մենակութեան պէս անուշ...

Ինձ թաղում է ցնորք ցանցում...

Միլար գիւեր... փոքած փուն...

ԶՈՒԳԱՅԵՌԱՐ

Գիշերն էր, որ խաւար ինձ ժպտաց.—
Մի սառ շունչ ինձ յամառ մեմնջաց...

Ու նորից շրջում են միասին.
Ու նորից փաթարում իմ վզին...

Երկուսով՝ գեղ ծիծաղ... ոսկրոներ...
Երկուսն էլ հարազատ միամեր...

Ի՞նչ եմ ես... Լռութիւն!.. Լռութիւն!..
Լացն է զուր... Թէկուզ փուն... սեւ-խոր փուն!...

ՍԵՐ ՈՒ ՄԱՀ

Սեր ու մահ—երկու հարազատ փոքր են:
Լէպարդի

Երկու փոքր
Քողարկւած, լուռ սուերներ
Թափառում են իմ սան մօտ
Խանդոտ...

Մէկն սպիտակ,
Միւսը սեւ ֆոփի սակ...
Կախարդաշունչ գոյգ սիրուն,
Անփուն...

Ու մինչեւ լոյս
Թափառում են նրանք անյոյս...
Լսում է մեղմ շնչոց,
Ոգոց...

Առաւօտեան
Զփնում են նրանք անձայն...
Նորից գիշերն սպասում
Անփուն...

Ave Maria

Փափուկ միայն յսում է հեռից
 Ave Maria գիշերայ խորհից...
 Հեռում, շատ հեռում մեկն է աղօթում,
 Ու հեկեկանքն է քամին ինձ բերում...

Լսում է անվերջ՝ հոգի կտրատող,
 Զեփիւռից քնուե երգը արձատող...
 Հեռում, շատ հեռում ո՞վ է աղօթում,
 Ո՞վ է իր մեղքը իմ գլխին թափում...

Ու չ'կայ մի ձայն, որ ինձ մամնջար,
 Ու սիրս է լցում նախանձով խաւար...
 Իսկ աղօթքը մեղմ յսում է անվերջ,
 Ու անէծքը չար թափում է անեղջ...

Մռայլ երկինքն է սեւ հոգուս չոփում...
 Բայց աղօթք չ'ունեն՝ ես չեմ աղօթում...
 Ու կէս-գիշերին ես արձակուր
 Երգն եմ կրանում—մեղեդին իմում...

ԱՄԲՈՒ

Պանդօփում--ծուխ, աղմուկ
 Հայնոյանք,
 Ու հարբած փրփրաւոս,
 Մերկ կանայք...

Ոգեւունչ դիակներ
 Ուժասպառ,
 Թաւալող... Մութ աչքեր
 Խելագար...

Հա... հա... հա... Մեռելոց,
 Մեռելոց!..
 Գերեզման գիշերայ
 Մեռելոց!..

Ու ջահեր բազմաթիւ,
 Խունկ ծխող...
 Ծնկաչոփ մենք անթիւ
 Աղօթող...

Հա... հա... հա... Աստածներ
 Ոսկուացած...
 Գարշահոս սփնգներ
 Բորբոխած...

Պար-ծիծաղ պանդոփում—
 — Խրախչանք!..
 Ու պոռնիկ, մերկ, անփուն,
 Ծեք կանայք...

* * *

Լուռ է, շատ լուռ.
 Ու ժամերը կանգնեցին...
 Գիշերն է լուռ՝
 Աղմըկալի փողոցները լռեցին...

Ու խեղդում են արհմային ֆնի մէջ
 հոգիները...
 Շարունակ ու յառ անվերջ
 Գիշերները...

Խեղագար չ'եմ!... հարբած էլ չ'եմ ես այսօր...
 Վախենում եմ
 Ինքս ինձանից ահաւոր...
 Վախենում եմ...

Լուռ է, շատ լուռ.
 Ու ժամերը կանգնեցին...
 Գիշերն է լուռ՝
 Աղմըկալի փողոցները լռեցին...

Quo vadis

Մութ պատահաններ երկար շարքերով...

Մէկն է լուռ շփում խուլ փողոցներով...

Քայլերն են լսում ցած՝ հաս ու կտր...

Սեւացած աչքեր—պատահաններ խոր...

Երեք հաս փողոց փոփոխ փառաւորներ...

Երեք հաս փողոց գաղտնալի անոտ...

Դէ ընտրի՜ր՝ Աստած, կասկածանք թէ սուր?...

Երեքն էլ կորած խաւարում սեւ-մութ...

Երանի նրան, ով խոր փուն ունի!..

Երանի նրան, ով անէծք չ'ունի!..

Ով չի թափառում մութ փողոցներով,

Ով չի սպասում ու ասում ցաւով...

* * *

Ես լսեցի՜ ինչպէս ցողը գիշերային

Ընկաւ ծաղկին...

Թող ինձ մենակ... փայփայանքն է քո շաւ կրֆոս

Ու սրփոս...

Յուրս երազն է շղարհ-փողով հոգիս պատել

Ու կաշկանդել...

Դու հեռացիր, որ ես մենակ լուռ աղօթեմ,

Երազեմ...

Օտար եմ քեզ հիմա ինչպէս արմազ լուսինն

Արեգակին...

Թող չը հալչէ ցողն իմ հոգու ցուրս շողշողուն


Քո գրկում...



ԲԱՐԱՅՐ

Քո աչերը— խո՛ր փառայր,
Ուր հաւաքում են
Սէւերները գաղսնաբար,

Աղօթում են... լալիս են...
Խո՛ր, խո՛ր գրաւիչ,
Կախարդ փառայր—սէ՛ր ու վիճես...



ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.

Դիմել՝ Թիֆլիզի գրափաճառներին և հեղինակին այս հասցեով. Ս. Ս.-Բուրգ, Лѣсной
Сегаля проспектъ № 1.

ՀՀ Ազգային գրադարան



NL0321809

22594